Հավելված N 548
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ֆինանսական ենթակառուցվածքների վարչության (այսուհետ՝ Վարչություն) կապիտալի շուկայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.26-Մ2-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի խթանմանն ու զարգացմանը միտված միջոցառումների մշակման աշխատանքները.
2. իրականացնում է աշխատանքներ կապիտալի շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ.
3. իրականացնում է կապիտալի շուկայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և դրանց իրականացման աշխատանքները.
4. իրականացնում է ոլորտի կայացմանն ու սահուն զարգացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանման և լուծումների առաջադրման աշխատանքները.
5. իրականացնում է կապիտալի շուկայի, մասնավոր բաժեմասնակցային ֆոնդերի զարգացման մեխանիզմների ձևավորման, ֆինանսների հասանելիության գործիքակազմի զարգացման աշխատանքները.
6. պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ, բաժնի իրավասությունների սահմաններում, մասնակցում է միջազգային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներին.
7. իրականացնում է ոլորտը կարգավորող առկա օրենսդրական կարգավորումների բարեփոխմանն ուղղված աշխատանքները.

Իրավունքները՝

• **պահանջել** համապատասխան մարմիններից անհրաժեշտ հիմնավորումներ և փաստաթղթեր ֆինանսական հասանելիությանը և կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծությանն ուղղված միջոցառումների իրականացման համար.

• **պահանջել** համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ֆոնդային շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացման, ոլորտը կարգավորող օրենսդրության մշակման, բարելավման և ներդնման վերաբերյալ.

• մասնակցել համապատասխան մարմինների և՝ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների և նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների հետ կապիտալի շուկայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման վերաբերյալ քննարկումներին.

• մասնակցել կապիտալի շուկայի զարգացմանը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանման և լուծումների վերաբերյալ քննարկումներին, ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ոլորտի զարգացման վերաբերյալ.

• մասնակցել կապիտալի շուկայի, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի զարգացման մեխանիզմների ձևավորման վերաբերյալ քննարկումներին.

• **պահանջել** համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ միջազգային ծրագրերի մշակման և իրականացման վերաբերյալ.

• մասնակցել իրավական ակտերի նախագծերի, ծրագրերի, ռազմավարությունների, մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելու վերաբերյալ քննարկումներին.

• մասնակցել պետական և միջազգային կառույցների հետ համագործակցությանն ուղղված համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին, ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից պարզաբանումներ և դիրքորոշումներ:

Պարտականությունները՝

• մշակել ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի խթանմանն ու զարգացմանը միտված միջոցառումներ.

• ուսումնասիրել և վերլուծել ֆոնդային շուկայի ոլորտը կարգավորող օրենսդրությունը և մշակել առաջարկություններ ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավմանն ուղղված.

• մշակել կապիտալի շուկայի վերաբերյալ՝ ներառյալ զարգացման միտումներ և առկա կարգավորումներ, իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերը.

• ուսումնասիրել և բացահայտել կապիտալի շուկայի զարգացմանը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը խոչընդոտող խնդիրները, ուսումնասիրել վերջիններիս լուծման վերաբերյալ միջազգային փորձը, վերլուծել և նախապատրաստել համապատասխան առաջարկություններ.

• մշակել կապիտալի շուկայի, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի և ֆինանսների հասանելիության զարգացմանը ուղղված իրավական ակտերի նախագծեր, ծրագրեր, ռազմավարություններ, հայեցակարգեր, եզրակացություններ, այլ փաստաթղթեր.

• ուսումնասիրել ոլորտի վերաբերյալ միջազգային գնահատումներն ու զեկույցները և դրանց հիման վրա ներկայացնել առաջարկություններ ոլորտը կարգավորող առկա օրենսդրական կարգավորումների բարեփոխմանն ուղղությամբ.

• մշակել ոլորտի զարգացումը կարգավորող իրավական ակտերի նախագծեր, ծրագրեր, ռազմավարություններ, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր.

• Հայաստանի Հանրապետությունում կապիտալի շուկան կարգավորող այլ գերատեսչությունների կողմից մշակված օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացնել կարծիքներ, առաջարկություններ և դիտողություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ ֆինանսավարկային բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ֆինանսների և ռեսուրսների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4.Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: